4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիպարիտ Հրաչի Համբարձումյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. մայիսի 12

ք. Արովյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մայիսի 2021 թվականի N 563

**ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ 3-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 2/6
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԵՆՅԱԿՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի, Արովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն և 2021 թվականի մարտի 3-ի N 12-Ա որոշումների, հիմք ընդունելով անշարժ գույքն աճուրդով վաճառելու մասին 2021 թվականի մայիսի 4-ի N 4 արձանագրությունը.

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2019 թվականի դեկտեմբերի 23-ի N 23122019-07-0106 վկայական) Արովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 3-րդ շենքի թիվ 2/6 հասցեում գտնվող 46.84 քառակուսի մետր մակերեսով սենյակն օտարել Գուրգեն Գառնիկի Արշակյանին:

2. Գուրգեն Գառնիկի Արշակյանը պարտավոր է.

1) համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 514 500 (հինգ հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր) դրամ՝ սենյակի գինը.

2) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 73 000 (յոթանասուներեք հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի և ոչ բնակելի տարածքների օտարման համար ծառայության վճար, 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Գուրգեն Գառնիկի Արշակյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գուրգեն Գառնիկի Արշակյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. մայիսի 12

ք. Արովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴԱՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մայիսի 2021 թվականի N 564

ԱՐԴԱՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ 3-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 2/7
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի, Արդյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն և 2021 թվականի մարտի 3-ի N 12-Ա որոշումների, հիմք ընդունելով անշարժ գույքն աճուրդով վաճառելու մասին 2021 թվականի մայիսի 4-ի N 5 արձանագրությունը.

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2019 թվականի դեկտեմբերի 23-ի N 23122019-07-0085 վկայական) Արդյան քաղաքի Հանրապետության պողոտայի 3-րդ շենքի թիվ 2/7 հասցեում գտնվող 47.34 քառակուսի մետր մակերեսով բնակարանն օտարել Գուրգեն Գառնիկի Արշակյանին:

2. Գուրգեն Գառնիկի Արշակյանը պարտավոր է.

1) համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 514 500 (հինգ հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր) դրամ՝ բնակարանի գինը.

2) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 73 000 (յոթանասուներեք հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի և ոչ բնակելի տարածքների օտարման համար ծառայության վճար, 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Գուրգեն Գառնիկի Արշակյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գուրգեն Գառնիկի Արշակյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. մայիսի 12

ք. Արդյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մայիսի 2021 թվականի N 565

**ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ 3-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 2/8
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի, Արովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն և 2021 թվականի մարտի 3-ի N 12-Ա որոշումների, հիմք ընդունելով անշարժ գույքն աճուրդով վաճառելու մասին 2021 թվականի մայիսի 4-ի N 6 արձանագրությունը.

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2019 թվականի դեկտեմբերի 23-ի N 23122019-07-0052 վկայական) Արովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 3-րդ շենքի թիվ 2/8 հասցեում գտնվող 46.83 քառակուսի մետր մակերեսով բնակարանն օտարել Գուրգեն Գառնիկի Արշակյանին:

2. Գուրգեն Գառնիկի Արշակյանը պարտավոր է.

1) համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 514 500 (հինգ հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր) դրամ՝ բնակարանի գինը.

2) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 73 000 (յոթանասուներեք հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի և ոչ բնակելի տարածքների օտարման համար ծառայության վճար, 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Գուրգեն Գառնիկի Արշակյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գուրգեն Գառնիկի Արշակյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. մայիսի 12
ք. Արովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴԱՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2021 թվականի N 566

ՆԵՐՍԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԵՎ ՌՈՒԶԱՆՆԱ ԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Ներսես Ավետիսյանի և Ռուզաննա Ազարյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի մայիսի 07-ի N Ք-1084), հաշվի առնելով Արմվյան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 12-ի N 6 արձանագրությունը.

1. Թույլատրել Ներսես Ավետիսյանին և Ռուզաննա Ազարյանին գրավադրելու իրենց անչափահաս երեխաների՝ Աննա (ծնված՝ 02.07.2011թ.), Արսեն (ծնված՝ 10.09.2014թ.) և Արտյոմ (ծնված՝ 13.06.2020թ.) անվամբ ծեռք բերվող Արմվյան քաղաքի Հատիսի փողոցի 6/12 հասցեում գտնվող անշարժ գույքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. մայիսի 13
ք. Արմվյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2021 թվականի N 567

**ԱՐԴՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 755 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հաշվի առնելով Հողային օրենսգրքում կատարված փոփոխությունները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի օգնական Գոռ Մելիքսեթյանի զեկուցագիրը (մուտք՝ 2021 թվականի մայիսի 13-ի N Բ-1120).

1. Արմյան համայնքի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 24-ի «Արմյան համայնքի աճուրդի կանոնակարգը հաստատելու մասին» N 755 որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. Գեղորգյան

Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. մայիսի 13
ք. Արմյան

Հավելված
Արուսյան համայնքի ղեկավարի
2021 թվականի մայիսի 13-ի N 567 որոշման



« Հավելված
Արուսյան համայնքի ղեկավարի
2020 թվականի օգոստոսի 24-ի N 755 որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ ԱՐՈՒՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԾՈՒՐԴԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արուսյան համայնքի ղեկավարի (այսուհետ՝ աճուրդի կազմակերպիչ) կողմից հրապարակային աճուրդների միջոցով Արուսյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման գործընթացը:

2. Աճուրդները կազմակերպվում և իրականացվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման և սույն կանոնակարգով սահմանված կանոններով:

3. Աճուրդներն իրականացվում են բաց դասական աճուրդի կազմակերպման ձևով:

4. Աճուրդների իրականացման նպատակով աճուրդի կազմակերպիչը ստեղծում է աճուրդային հանձնաժողով անդամներ 6 անդամով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համայնքապետարանի աշխատակազմի մասնագետներ և ավագանու անդամներ:

5. Աճուրդային հանձնաժողովի կազմից նշանակվում է աճուրդավար և արձանագրող:

6. Աճուրդային հանձնաժողովը իրավագոր է, եթե ներկա են աճուրդային հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ը:

7. Աճուրդի մասին հայտարարության (հրապարակային ծանուցման) տեքստը հաստատում է աճուրդի կազմակերպիչը:

8. Աճուրդին մասնակցել ցանկացողները լրացնում են սահմանված ձևի հայտ և հանձնում աճուրդավարին: Հայտ լրացրած անձի տվյալները նույն օրը աճուրդի արձանագրողը գրանցում է մասնակիցների գրանցամատյանում (կցվում է՝ Ձև N 1) և տրամադրում է մասնակցի վկայական (կցվում է՝ Ձև N 2):

9. Աճուրդի մասնակցության հայտը չի ընդունվում, եթե հայտ ներկայացնողը չի հանդիսանում աճուրդով վաճառվող լոտ(եր)ի սեփականության իրավունքի սուբյեկտ:

10. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

**ԱՃՈՒՐԴԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՏՆԵՐԻ ՈՒ
ՄԱՍՆԱԿԻՑ ԶՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

11. Աճուրդն անցկացվում է հրապարակային ծանուցման մեջ նշված օրը՝ աշխատանքային ժամերին:

12. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը կատարվում է մամուլով, զանգվածային լրատվության այլ միջոցներով, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական կայքէջով և մարզպետարանի պաշտոնական կայքէջով՝ աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ:

Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը աճուրդի կայացման օրվանից առնվազն 1 օր առաջ զետեղվում է Արովյանի համայնքապետարանի վարչական շենքում տեսանելի վայրում:

13. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի օրենքով սահմանված տեղեկությունները:

14. Աճուրդում վաճառվող գույքի (լոտի) վիճակի, ինչպես նաև դրա վերաբերյալ հրապարակված տվյալների անճշտության համար աճուրդի կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում, եթե անճշտությունը չի կատարվել իր կողմից:

15. Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն կանոնակարգին կարող են ծանոթանալ Արովյանի համայնքապետարանում՝ աճուրդի մասին ծանուցումը հրապարակելու պահից մինչև աճուրդը սկսվելու պահից առնվազն 30 րոպե առաջ:

16. Կանոնակարգի և աճուրդի հետ կապված այլ փաստաթղթերի պատճենները տրամադրվում են համապատասխան դիմումի հիման վրա: Յուրաքանչյուր պատճենահանված էջի համար վճարը սահմանվում է 50 (հիսուն) դրամ:

17. Աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները կատարվում են օրենքով սահմանված կարգով:

18. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք (այսուհետ՝ դիտորդ) աճուրդի դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր: Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար աճուրդի սկսվելու պահից 30 րոպե առաջ վաճառվում են դիտորդի տոմսեր (կցվում է՝ Ձև N 3), որի համար վճարվում է մուտքի վճար:

19. Մուտքի վճարի չափը (դիտորդի տոմսի արժեք) սահմանվում է 5000 (հինգ հազար) դրամ:

20. Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին.

1) չհայտնել իրենց դժգոհությունը, սպառնալիքը կամ գոհունակությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդային հանձնաժողովի կամ աճուրդավարի գործողությունների նկատմամբ,

2) չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված դեպքերի,

3) հարցադրումներ ուղղել աճուրդային հանձնաժողովին լոտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ,

4) աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ,

5) չթաքցնել օրենքով սահմանված՝ աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը:

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԼՈՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

21. Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի անցկացման օրը՝ աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ մուծել են նախավճար՝ աճուրդում վաճառվող լոտի մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և ստացել մասնակցի վկայական:

22. Աճուրդի կազմակերպիչը հրապարակային ծանուցման պահից սկսած՝ մինչև աճուրդի բացմանը նախորդող 3-րդ աշխատանքային օրը մասնակիցներին ընձեռում է հնարավորություն՝ լոտ(եր)ն ուսումնասիրելու համար դիմել համայնքապետարան յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի):

23. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

24. Աճուրդներն անց են կացվում դասական (գնի ավելացման) եղանակով:

25. Աճուրդը սկսվում է, եթե մասնակիցների թիվը մեկ կամ ավելի է:

26. Աճուրդը անց է կացնում աճուրդավարը, որը հայտարարում է աճուրդի ձևը, գնային հայտեր ներկայացնելու կարգը, լոտի անվանումը, բնութագրող ցուցանիշները, մեկնարկային գինը, աճուրդային նվազագույն քայլի չափը, որը սահմանվում է լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով և կարող է կլորացվել հարյուր դրամի ճշտությամբ մինչև առավելագույն ամբողջ թիվը:

27. Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իրեն տրված մասնակցի վկայականը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռքբերելու մասին:

28. Յուրաքանչյուր մասնակից կարող է լոտի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով՝ քայլի չափից ոչ պակաս գումարով, բարձրացնելով մասնակցի վկայականը:

29. Աճուրդավարը շարունակում է աճուրդն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ մասնակից, որը համարվում է աճուրդում հաղթած մասնակից՝ աճուրդավարի կողմից առաջարկված գինը երրորդ անգամ հայտարարելու և մուրճիկի երրորդ հարվածից հետո:

30. Եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանությամբ որոշում է աճուրդում հաղթող համարված մասնակցին:

31. Վիճակահանությամբ աճուրդում հաղթող համարված մասնակցի որոշումը կատարվում է հետևյալ պայմաններով՝ աճուրդային հանձնաժողովի անդամները բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ որոշում են միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին, այնուհետև մասնակիցների մասնակցի վկայականին համապատասխան համարը պարունակող քառածալ թղթերը դրվում են ծրարների մեջ և լցվում ոչ թափանցիկ արկղի մեջ: Աճուրդում հաղթող մասնակից

է համարվում այն մասնակիցը, որի մասնակցի վկայականին համապատասխանող համարը աճուրդավարը առաջինն է հանում արկղից:

32. Աճուրդի արդյունքներն արձանագրվում են աճուրդի արձանագրողի կողմից: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը և հանձնաժողովի անդամները ստորագրում են աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

33. Եթե աճուրդի հաղթող ճանաչված անձը արձանագրության վերաբերյալ առարկություններ է ունենում, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

ԼՈՏԻ ԳՆԻ ՎՃԱՐՈՒՄԸ

34. Աճուրդում հաղթած անձը 10 օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքով ձևավորված գինը: Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում, կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվում է սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելուց, այնպես էլ առավաճառքի պայմանագիր կնքելուց, ապա համարվում է, որ հաղթած անձը հրաժարվել է հողամասը ձեռք բերելուց:

Աճուրդում հաղթող ճանաչված անձին տրվում է լոտի օտարման մասին որոշման նախագիծ, որտեղ նշվում են վճարման ենթակա գումարները և համապատասխան հաշվեհամարները: Նախավճարը հաշվարկվում է հաղթողի կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

Աճուրդում հաղթող ճանաչված անձը՝ որոշման նախագծում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է նշված հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնում աճուրդի կազմակերպչին:

Աճուրդում հաղթող ճանաչված անձի կողմից լոտի վճարումները կատարելուց հետո, բայց ոչ ուշ աճուրդի արդյունքները ամփոփելուց հետո 10-րդ օրը, աճուրդի կազմակերպիչը հաղթողին է տրամադրում աճուրդի արձանագրության մեկ օրինակը, լոտի օտարման մասին կազմակերպչի որոշումը և օտարման գործարքի համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

35. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում: Հաղթողի կողմից գումարն ամբողջությամբ վճարվելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

36. Աճուրդը համարվում է չկայացած, եթե աճուրդի մասնակցության համար հայտ չի ներկայացվել, կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվել է լոտը ձեռք բերելուց:

37. Աճուրդի կազմակերպիչը աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցների գրավոր դիմումի հիման վրա նախավճարը վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին: Հակառակ դեպքում նախավճարի գումարը չի վերադարձվում:

38. Աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացքում կազմված փաստաթղթերը և նյութերը պահպանվում և արխիվացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:»:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2021 թվականի N 568

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և հիմք ընդունելով Արովյան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 28-ի N 22-Ա որոշումը.

1. Հայտարարել աճուրդ Արովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու համար:
2. Աճուրդը կկայանա 2021 թվականի հունիսի 16-ին:
3. Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. մայիսի 13
ք. Արովյան

Արմավյան համայնքի աճուրդների կազմակերպիչը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերի բաց դասական աճուրդ՝

Լոտի համարը	Հողամասի գտնվելու վայրը (հասցեն)	Հողամասի մակերեսի չափը (քառ. մ.)	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը (օգտագործման նպատակը)	Հողամասի օտարման մեկնարկային գինը (հազ. դրամ)
Լոտ 1	ք. Արմավյան, 4-րդ մ/շ., թիվ 71/6 հող.	42,0	07-002-0039-1584	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	442,0
Լոտ 2	ք. Արմավյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 41 հող.	537,50	07-002-039-904	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2388,0
Լոտ 3	ք. Արմավյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 51 հող.	525,00	07-002-039-808	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2332,0
Լոտ 4	ք. Արմավյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 54 հող.	522,45	07-002-039-913	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2321,0
Լոտ 5	ք. Արմավյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 59 հող.	525,00	07-002-039-812	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2332,0
Լոտ 6	ք. Արմավյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 62 հող.	537,50	07-002-039-881	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2388,0
Լոտ 7	ք. Արմավյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 64 հող.	537,50	07-002-039-880	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2388,0
Լոտ 8	ք. Արմավյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 65 հող.	525,00	07-002-039-790	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2332,0
Լոտ 9	ք. Արմավյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 67 հող.	525,00	07-002-039-802	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2332,0

Լոտ 10	ք. Արուսյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 70 հող.	537,50	07-002-039-899	քնակավայրերի	քնակելի կառուցապատման	2388,0
Լոտ 11	ք. Արուսյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 72 հող.	537,50	07-002-039-900	քնակավայրերի	քնակելի կառուցապատման	2388,0
Լոտ 12	ք. Արուսյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 74 հող.	525,00	07-002-039-819	քնակավայրերի	քնակելի կառուցապատման	2332,0
Լոտ 13	ք. Արուսյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 82 հող.	525,00	07-002-039-833	քնակավայրերի	քնակելի կառուցապատման	2332,0
Լոտ 14	ք. Արուսյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 84 հող.	525,00	07-002-039-832	քնակավայրերի	քնակելի կառուցապատման	2332,0
Լոտ 15	ք. Արուսյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 86 հող.	525,00	07-002-039-791	քնակավայրերի	քնակելի կառուցապատման	2332,0
Լոտ 16	ք. Արուսյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 88 հող.	525,00	07-002-039-792	քնակավայրերի	քնակելի կառուցապատման	2332,0
Լոտ 17	ք. Արուսյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 90 հող.	525,00	07-002-039-829	քնակավայրերի	քնակելի կառուցապատման	2332,0
Լոտ 18	ք. Արուսյան, 7-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 122/15/3 հող.	799,0	07-002-0032-0050	քնակավայրերի	այլ հողեր	5461,0
Լոտ 19	ք. Արուսյան, 7-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 122/15/5 հող.	1085,5	07-002-0032-0051	քնակավայրերի	այլ հողատեսք	7419,0
Լոտ 20	ք. Արուսյան, 7-րդ մ/շ., 3-րդ թաղ., թիվ 14/2 հող.	96,02	07-002-0032-0035	քնակավայրերի	այլ հողեր	657,0
Լոտ 21	ք. Արուսյան, 7-րդ մ/շ., թիվ 122/15/11 հող.	485,0	07-002-0032-0054	քնակավայրերի	այլ հողեր	3315,0
Լոտ 22	ք. Արուսյան, 7-րդ մ/շ., թիվ 122/15/7 հող.	513,0	07-002-0032-0055	քնակավայրերի	այլ հողեր	3506,0
Լոտ 23	ք. Արուսյան, 7-րդ մ/շ., թիվ 122/15/9 հող.	548,0	07-002-0032-0053	քնակավայրերի	այլ հողեր	3746,0



Լուտ 24	ք. Արուվյան, Սարալանջի փող., թիվ 14/10/12 հող.	394,5	07-002-0040-0329	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	4148,0
Լուտ 25	ք. Արուվյան, Սևանի փող., թիվ 2/11 հող.	177,6	07-002-0049-0719	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2873,0

1. Աճուրդը կայանալու է 2021 թվականի հունիսի 16-ին ժամը 12:00-ին Արուվյանի համայնքապետարանի նիստերի դահլիճում (ք. Արուվյան, Բարեկամության հր-1, 2-րդ հարկ):
2. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար սահմանված չափով վճարի անդորրագիր, անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթեր:
3. Մասնակցության վճարը սահմանված է 14000 դրամ:
4. Նախավճարի չափը սահմանված է լոտի մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, որը վճարվում է աճուրդի անցկացման օրը՝ աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ:
5. Աճուրդի քայլի չափը սահմանված է լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
6. Հողամասերի նկատմամբ սերվիտուտներ և այլ սահմանափակումներ չկան:
7. Աճուրդի կանոնակարգին, ինչպես նաև հողամասերին առնչվող կոմունիկացիաների վերաբերյալ տվյալներին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Արուվյանի համայնքապետարան (Բարեկամության հրապարակ 1, հեռ. 060 53-64-32):
8. Հայտերն ընդունվում և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ՝ մինչև 2021 թվականի հունիսի 10-ը, ժամը 17:00:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2021 թվականի N 569

ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 522 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հաշվի առնելով Արուսյանի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2021 թվականի մայիսի 13-ի N Բ-1118)։

1. Արուսյան համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 30-ի «Արուսյան համայնքի սեփականություն հանդիսացող Հանրապետության պողոտայի թիվ 1/2/10 հասցեում գտնվող սպասարկման օբյեկտը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 522 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝ նախաբանում «Հողային օրենսգրքի» բառերից հետո լրացնել «4-րդ հոդվածի 3.1-րդ մասի,» բառերով, իսկ «3-րդ» բառը փոխարինել «4-րդ» բառով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. մայիսի 13
ք. Արուսյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2021 թվականի N 570

**ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ 15/1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 29 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԽՈՐԴԱՆՈՅՆ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի և իրավահարաբերության պահին գործող Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ և 18-րդ կետերի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավտոտնակը և խորդանոցը կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Ասատուր Ասատրյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հունվարի 29-ի N Ք-343).

1. Ասատուր Ժիրայրի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի հուլիսի 22-ի N 22072020-07-0123 վկայական) Արուվյան քաղաքի Հանրապետության պողոտայի 15/1 շենքի թիվ 29 հասցեում գտնվող 56.5 քառակուսի մետր մակերեսով հողամասում՝ «ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2021 թվականի հունվարի 27-ին տրված հատակագծի (կցվում է) համաձայն՝ ինքնակամ կառուցված 109.2 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի կառուցապատման ավտոտնակը և խորդանոցը համարել օրինական:

2. Ասատուր Ասատրյանը պարտավոր է ինքնակամ կառուցված ավտոտնակի և խորդանոցը օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Արուվյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին մուծել 283 920 (երկու հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր քսան) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ասատուր Ասատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. մայիսի 13

ք. Արուվյան



ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հոկտեմբերի 20-ի N 284-Ն որոշմամբ
անշարժ գույքի գնահատման արդյունքների համառոտագիր

ԱՄՏԱՌԻ ՄԱՍԻՆ

Ամուն, ազգանուն

Կուտայր

Մարզ

Արդյան


Համայնք

Հանրապետության արդյուտա 15 /1 շենք թիվ 29


Հասցե

Մասշտաբ 1:100

1. Ավտոտնակ և խորանոց



1-ին հարկ
D=0.05, 0.4
H=3.1
h=2.9



2-րդ հարկ
D=0.05, 0.24
H=2.0-2.9
h=1.8-2.7



<<ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ>>

Կատարող

[Signature]
Շտրագրություն

Տեղանք Արման

(Ամուն, ազգանուն)

27.01.2021թ.

Ամիս, ամսաթիվ

Որակավորման վկայականի համարը 0247

տրման ամիս, ամսաթիվը

20.12.2012թ.

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզ ք. Արովյան հանրապետության պողոտա 15/1 շենք թիվ 29 հասցեով
հողամասում ինքնակամ կառուցված շինությունների արտաքին մակերեսը կազմում է 109.2
քմ, որից 54.6 քմ ավտոտնակ և 54.6 քմ խորդանոց:

Կատարող



S. Liskanyan

(Անուն, Ազգանուն)

27.01.2021թ.

(Ամիս, ամսացիվ)

Որակավորման վկայականի

N 0247

(Համարը)

Իրավաբանական անձի

264.970056

(Պետական գրանցման համարը)

"Տիգրան Լևոնյան" ԱԶ

(Անվանումը)



Դիմող՝ ՀՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տրամադրված տեղեկատվությունը՝

05.06. 2020թ.
(տրման ամսաթիվը)

Գ/Գ	Մարզ	Համայնք, քաղաք, գյուղ, վարչական շրջան	Ծածկագիր	Կադաստրային քարտեզ		Շրջադարձային կետերի կոորդինատներ		Տպագրված թերթեր	
				Միավորի քանակը	Արժեքը (դրամ)	քանակը	Արժեքը (դրամ)	քանակը	Արժեքը (դրամ)
1	Կոտայք	ք.Արթուրյան	0048-0154	1	100				
2	Կոտայք	ք.Արթուրյան	0066-0115	1	100				
3	Կոտայք	ք.Արթուրյան	0067-0003,0017	2	200				

Վճարման ենթակա գումարի չափը կրկնավճարով՝ 800 դրամ

Տեղեկատվությունը տրամադրվում է Կադաստրի Կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից:

Տեղեկատվությունը տրամադրվել է www.e-cadastre.am կայք տեղից



Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N 0247


ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության
գործունեության մասնագիտական որակավորման հանձնաժողովի
18 դեկտեմբերի 2012թ. եզրակացությամբ՝ արձանագրություն N 1
տրվել է

ՔԱՐՏԵԶԱԳՐՈՂԻ, ԳԵՈԴԵԶԻՍՏԻ, ԶԱՓԱԳՐՈՂԻ
(ՀԱՇՎԱՌՈՂԻ), ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԻ

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի նախագահ



Ե.ԼԵՎՈՆՅԱՆ



<<20>> դեկտեմբերի 2012թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴԱՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2021 թվականի N 571

**ԱՐԴԱՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 10 ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ
ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ,
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Զոհրաբ Ավագյանի դիմումը (մուտք՝ 2020 թվականի հուլիսի 28-ի N Բ-1249)։

1. Աբովյան քաղաքի ինտերնացիոնալ փողոցի թիվ 10 շենքի հարևանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 21.0 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնական կառուցված 21.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով և 17.41 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի կառուցապատման ավտոտնակը համարել Աբովյան համայնքի սեփականություն և ճանաչել օրինական։

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը։

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում։

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք։

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է)։

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության պահպանման ու սպասարկման համար առանձնացված այլ հողեր հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված, որպես բնակելի կառուցապատման հողամաս և տրամադրել հասցե՝ քաղաք Աբովյան, 1-ին միկրոշրջան, թիվ 7/35/5։

5. Սույն որոշումը՝ ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում, տրամադրել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը։

6. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնական կառույցն իրականացրած Զոհրաբ Ավագյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին։

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. մայիսի 13
ք. Արուսյան



ՀՐԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻՇ

Հաստատում եմ՝
Համայնքի ղեկավար

Արդյուն համայնք

Ամուն, ազգանուն

ին Հողատիրացման հիմքը

<< Կար. 26.05.2006թ. N1022-Ն-00

13.05.2020

Կոտայք


Արդյուն

1-ին միջ. քիվ 7/35/5

Մարզ

Խաղաք

Մասշտաբ 1:100



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

Ավերից (քմ.հա) 0.0021

Ծածկագիրը 0075-

Լայտական կապակցությունը բնակավայրերի

Փորձարկման նշանակությունը այլ հողեր

Հողամասը ծագությունված է

Վերջին գրանցումը	Կողմնակցություն		Վերջին գրանցումը	Համայնքի անվանումը (անվանում)	ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱԿԱՆ ՍԵՐՎԻՍ		Վերջին գրանցումը	Կողմնակցություն		Վերջին գրանցումը
	Y	X			Հողատիրացման նշանակությունը (անվանում)	Հողատիրացման նշանակությունը (անվանում)		Y	X	
1	8467811.5669	4459667.8529	3.20				1	8467811.5669	4459667.8529	3.20
2	8467808.3016	4459670.1131	5.60				2	8467808.3016	4459670.1131	5.60
3	8467813.2570	4459674.0773	3.20				3	8467813.2570	4459674.0773	3.20
4	8467815.5222	4459671.8171	1.10				4	8467815.5222	4459671.8171	1.10
5	8467814.7453	4459671.0384	0.70				5	8467814.7453	4459671.0384	0.70
6	8467815.2421	4459670.5427	3.81				6	8467815.2421	4459670.5427	3.81
7	8467812.7352	4459667.8760	0.95				7	8467812.7352	4459667.8760	0.95
8	8467812.0813	4459668.3484	0.70				8	8467812.0813	4459668.3484	0.70
1	8467811.5669	4459667.8529					1	8467811.5669	4459667.8529	

Հաստատող

Ս. Ղուկասյան

(ստորագրություն)

(ստորագրություն)

Պրակտիկական վկայականի համարը 046

15.12.2019թ.

Դրամական արժեք

0311 081920

«ԳԻՍԱՍՏ» ՍՊԸ

26.06.2020թ.

(անվանում գրանցման համար)

(անվանում)

(անվանում)

(անվանում)

(անվանում)

(անվանում)

(անվանում)


(անվանում)

(անվանում)

(անվանում)

(անվանում)

1. Ուղի
 $H=1.55, 2.15$
 $h=1.35, 2.00$
 $D=0.20-0.40$
 $d=0.20$



Հաստատող
 Արևիկա ընկերություն
 Արևիկա ընկերություն

(Գրություն)
 046
 03.11.2020
 (Ստորագրողի անունը)

(Ստորագրողի անունը)
 «ԳՐԱԿՏ» ՍՊԸ
 15.12.2019
 (Ստորագրողի անունը)



Շինությունների բնութագիր ք Արդյան 1-ին մկշ թիվ 7/35/5

<<		Հայաստանի Հանրապետություն		Գործառնական նշանակությունը		Հարկ		Հարկայնություն		Սակերես (մ²)		Օրինական		Ինքնական		Բարձրություն (մ)		Ծավալ (մ³)		Կառուցման տարեթիվ		Տակերի նյութը				Անդրադասարանության աստիճանը				Պատերի շինանյութի տեսակը		Միջնադասարան ծածկի նյութը		Արտաքին հարդարումն ըստ կողմերի					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26														
1	բնակելի	ապստոսակ	1	1		14.84	2.00	29.68	2002				✓				✓	բետ	✓						2														
1	բնակելի	ապստոսակ№2	1	1		2.57	1.35	3.47	2002				✓				✓	բետ		✓					4														

Շինությունների ընդհանուր մակերեսը (քմ)		Այդ թվում	
27		Օրինական կառուցված (քմ)	
17.41		28	
		0.00	
		29	
		17.41	

Կատարող

Handwritten signature
(ստորագրություն)

Ս. Ղուկասյան
(ստորագրություն)

Handwritten signature
(ամիս, ամսաթիվ)

Որակավորման

վկայական 0.46
(համարը)

15.12.2011թ.
(տրման ամիս, ամսաթիվ)

Ռոպակարանական անձի

03Ա 081920
(սխեմական գրանցման համար)

<<ԳԻՍ-ԱՐՏ>>ՍԴԸ
(սակարում)





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2021 թվականի N 572

**«ՄԵՀՐԱԲՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ՄԵՀՐԱԲՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձի հայտը (մուտք՝ 2021 թվականի մարտի 25-ի N S-179).

1. «ՄԵՀՐԱԲՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ հասարակական նշանակության շինությունը բազմաբնակարան բնակելի շենքի վերակառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է):
2. «ՄԵՀՐԱԲՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. մայիսի 13
ք. Արովյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԶԱՏԱԿԱԳԾԱՅԻ ԱՌԱՋԱՐԴԱՔ)**

N 63 «13» մայիսի 2021թ.

**հասարակական նշանակության շինությունը բազմաբնակարան բնակելի շենքի վերակառուցման
(հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակելի
կառուցապատման հողամաս)**

Օբյեկտ	(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)	
	«Աշխատանքային նախագիծ» (միջինից բարձր III-րդ կատեգորիա)	
	(հակիրճ բնութագրող, նկարագրող, ռիսկաբնութագրող և տարիմաներ (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)	
Գտնվելու վայրը	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Արտվան, 6-րդ միկրոշրջան, թիվ 5/10 շենք, ծածկագիր՝ 07-002-0039-0875	
	(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի հանգանակը)	
Կառուցապատող	«ՄԵՀՐԱԲՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վ/շ, Լոր Արեշ 37 փ., 97 տ., հեռ. 37491210523)	
	(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային նամակը)	
Առաջադրանքի տրամադրման հիմքը	Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման N 18022021-07-0175 վկայական տրված 18.02.2021թ., Հսքիզային նախագիծը:	
	(կառուցապատման նպատակով ՀՀ տնտեսությանը սահմանված կարգով իրավունք տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)	
Առաջադրանքի գործողության ժամկետը	մեկ ու կես տարի:	
	(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)	

Ն Ա Ռ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր Ը

(աստղանիշով (*) նշված դրույքների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է	նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման (հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)	
2. (*) Հողամասի չափերը	0.045599 հա	
	(հողամասի սահմանները՝ կողոպտանալի նշանակությամբ, մակերևույթ, մետ)	
3. Հողամասի առկա վիճակը	շինություն՝ 971.2 քմ	
	(տեխնիկական պայմաններ, շինության (այդ թվում՝ բանդան) ներկայիս առկա վիճակը (օգտագործումը, նշանակությունը, հարկաբյուրոյում, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)	
4. (*) Տրամադրության պայմանները	ներքաղաքային նշանակության ճանապարհ:	
	(ճանապարհների անվանումները, երկաթուղային տրամագծերի ճանապարհները և այլն)	
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Նախագծվող և կից տարածքներում անցնող ինժեներական գծեր և հաղորդակցություններ:	
	(բնակավայրում, կողոպտում, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)	
6. (*) Կից հողամասեր	Հարևանությամբ գտնվող հասարակական տարածքներ, բնակելի շենքեր	
	(կից հողագործողությունների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)	
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)	-----	
	(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)	
8. (*) Հատակագծային սահմանափակումներ	Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը	
	(տեղանքում գործող արտադրամաս, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրամադրության ներկայացվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիսները)	

Ն Ա Ռ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

(աստղանիշով (*) նշված դրույքների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ	մշակել նախագիծ՝ Արտվան քաղաքի 6-րդ միկրոշրջան, թիվ 5/10 հասցեում գտնվող հողամասում՝ հասարակական նշանակության շինությունը բազմաբնակարան բնակելի շենքի վերակառուցում՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով տրված հողամասի սահմաններում:	
	(կենտրոնական հատվածի շինության օբյեկտության օբյեկտության և նորոգման/վերակառուցման փաստաթղթերի պահանջները, առկա քաղաքաշինական հրազարկի փաստաթղթերի դրույքներից կամ դրանց բազմապատկերի դեպքում՝ կազմակերպված (կազմակերպվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններին, առաջարկություններ ձևակերպման, տեսիլների, արտաքին դրույքի, պատմա-հուշարձանների համաձայնությունների և գտնվելու լուծումների վերաբերյալ)	
9.1. (*) Օբյեկտի հետազոտությունը կարմիր գծին (մետր)	ըստ նորմերի	
9.2. (*) հետազոտությունը հարևան հողատերերից (օբյեկտներից) (մետր)	-----	
9.3. Բույսերի բարձրությունը (մետր)	120 մ	
	(սահմանային հարկաբյուրոյի բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀ, 02-2006 «Մեխանիկական շինարարություն և նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների պահպանում (հատուկ նաշնագրային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն))	
9.4. Կառուցապատման խտության գործակիցը	համաձայն նորմերի	
	(կառույցի (կառույցների) թանգամբ մակերևույթի հարաբերությունը հողամասի մակերևույթին)	
9.5. Կառուցապատման տոկոսը	մինչև 100 %	
	(կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերևույթին՝ տոկոսներով) (%)	
9.6. Կանաչապատման տոկոսը	-----	
	(կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերևույթին՝ տոկոսներով) (%)	

9.7. այլ պահանջներ

- Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով ետրմատիվային պահանջները
- Նախագծով նախատեսել հասարակական նշանակության շինությունը բազմաբնակարան բնակելի շենքի վերակառուցում

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգնդման, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Իմօններական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) Զբաղմունքային, կոյուղի, տաք ջրամատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) Էլեկտրամատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) Գազամատակարարում

Կցվում է

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրը

Կցվում է

(համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլակետային տվյալների)

12.5. քույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական միասնապատրաստում

Կազմակերպել տարածքի քրահնոագում:

(ունենի կազմակերպում, քրահնոագում, ինժեներական պաշտպանության միջոցառումներ)

14. Բարեկարգում

Ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել

(բանապատման պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, բանապատում, կոմպոզիցիոն լուծումներ)

15. Երկրաբանական նյութեր

Երկրաբանական տարրեր, բարե շար, ապակի, մետաղական տարրեր:

(շինարարական նյութերի օգտագործման առաջադրարկությունները տանիքների, ճակատների լուծումների, առաջին շենքի, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

(պաշտպանական իրավիճակներում մարդկանց օրվակների պաշտպանության միջոցառումներ)

17. Հակահրդեհային պահանջներ

Ապահովել հակահրդեհային ետրմատիվ պահանջները

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումներ)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

